Ե. Հ. ՆԱՋԱՐՅԱՆ

ԵԳԻՊՏԱԿԱՆ «ՎԱԹԱՆԻ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ «ՋԻՆՎՈՐԱԿԱՆ ԹԵՎԸ»

1875 թ. փաստորեն սնանկ հայտարարված և անգլիական ու ֆրանսիական գաղութարարների կողմից ֆինանսատնտեսապես ստրկացված Եգիպտոսում 1879 թ. սկզբներին հասարակության լայն խավերում դժգոհանքն ավելի ու ավելի էր վերաճում ընդդիմադրական տրամադրությունների։ Կրքերը ծայր աստիճանի բորբոքվեցին այն բանից հետո, երբ Նուբար փաշայի վարչապետությամբ գործող «եվրոպական» առաջին դահլիճը որոշեց իրը «հանուն խնայողության» բանակից արձակել 2500 սպաների, իսկ մնացածների չվճարված աշխատավարձերի վրա խաչ քաշելով, ռոճիկներն էլ կիսովին ցածրացնել[1]։ Որոշումը հիմնականում վերաբերում էր բնիկ եգիպտացի, ուրեմն «էթնիկական պատկանելիությամբ ու ծագմամբ... որոշապես շրջազծված սոցիալական մի խմբի»[2], որի անդամները, ի տարբերություն հրամկազմի ոչ-տեղաբնիկ բարձրաստիճան սպաների, բանակում ծառայությունն ըսկըսել էին որպես զորակոչված ֆելլահ-շարքայիններ և սպայական ցածրը կոչումներ ստացել էին 1860—1876 թթ. սուդանական և եթովպական զինարշավների ընթացքում։ Նշանակում է, որ խնայողության զուգահեռ որոշումը հետապնդում էր նաև քաղաքական նպատակ՝ «ավերել բանակը», ինչպես իր ժամանակին նկատել է եգիպտական գլխավոր շտաբի պետ ամերիկացի գնդապետ Սթոունը[3], վերացնել երկրի գաղութականացման հարաճելիք փորձերին հակազդելու կարևորագույն ուժը։

Թեկուզ սոսկ անձնական-դասային նկատառումների մղմամբ Լաթիֆ բեյ Սելիմի առաջնորդությամբ 1879 թ. փետրվարի 18-ին բողոքի դուրս եկած սպաները, որոնց թիկունք էին տալիս զինվորներն ու քաղաքացիները, ֆինանսների մինիստրության շենքում արգելափակեցին վարչապետին և մի քանի մինիստրների։ Խդիվ Իսմայիլը, որ հասկանալիորեն առնվազն ամերիկացի Սթոունի չափ տեղյակ էր կա-

ռավարության որոշման ետնաձալքին և որ Ն. Ա. Իվանովի պնդմամբ «բոլոր ամենայնի թաշալերում (գուցե թե նույնիսկ ներշնչում էր) Նուբարի կառավարության դեմ տարբեր բնույթի ելույթներ», ղորքի «անհնազանդությունը, պատրվակելով, չեղյալ հայտարարեց հեռացումների հրամանը և մարտի 9-ին, պաշտոնազրկված Նուբար փաշայի փոխարեն վարչապետ կարդեց իր ավագ որդուն՝ 27-ամյա գահաժառանգ Թաուֆիքին[4]։

Եվ սակայն այնքան, որքան անգլիացի Չարլզ Ռիվերս Վիլսոնն ու ֆրանսիացի դը Բլինյերը, ֆինանսների և հասարակական գործերի մինիստրի իրենց աթոռները նոր դահլիճում պահպանելով, շարունակեցին կիրառել իրենց երկրների թալանարար քաղաքականությունը, բողոքի շարժումը ոչ միայն չմեղմացավ, այլև վերելք ապրեց։ Շարժումն իր գագաթնակետին հասավ մարտի 28-ին, երբ Վիլսոնը խդիվին պարտադրեց իր ֆինանսական ստրկացուցիչ պլանը։ Բուռն կերպով բողոքում էին ոչ միայն ժողովրդական զանգվածները, ուլեման, աստիճանավորությունն ու սպաները, այլև նույնիսկ եգիպտական «խորհրդարանի»՝ Երևելիների ժողովի անդամները։ Հենց վերջիններիս նախաձեռնությամբ էլ ապրիլի 2-ին ծնունդ առավ «Ազգային հայտագիրը» («ալ-Լահիհա ալ-վաթանիյյա»), որում հիմնականում ընդգծվում էին իրենց երկիրը կառավարելու հարցում եգիպտացիների անկապտելի իրավունքը և Երևելիների ժողովի լիազորությունների շրջանակն ընդլայնելու պահանջը[5]։

Եգիպտոսում «վաթանի»-ազգային շարժման ծրագրային առաջին փաստաթուղթը հանդիսացող «Ազգային հայտագրի» հրապարակումը արաբագետների շրջանում սովորաբար ընդունվում է որպես նախորդ տարվա վերջերից կազմավորվել սկսած «Վաթանի» կուսակցության ծննդյան պաշտոնական թվական։ Եվ քանի որ «Հայտագիրն» ստորագրել էին ոչ միայն վարչապետ Թաուֆիքի հրամանն անտեսելով իրեն լուծարքի ենթարկված չհամարող Երևելիների ժողովի 75 անդամներից 60-ը, 72 աստիճանավորներ, 60 հոգևորականներ ու քաղաքաբնակ 42 երևելիներ, այլև 93 սպաներ, նշանակում է, որ մեծազդեցիկ ֆեոդալ ազնվականների նախաձեռնությամբ ու մահմեդական ալիմների և սիրիացի քրիստոնյա մտավորականների մասնակցությամբ կուսակցական կազմակերպությունը որոշակի տեսքի եկած «Վաթանի» կուսակցության շրջանակներում իր պատկառելի տեղն էր զբաղեցնում նաև «վաթանի»-տեղաբնիկ սպայությունը։ Վերջինս առաջին իսկ օրից, համենայն դեպս ամենաուշը հոմիսից սկսած ու մինչև վերջ կազմակերպության մյուս

բաղադրատարրերից որոշակի հեռավորություն պահպանելու իսկ պատճառով, իր ժամանակին պիտի ընկալվեր ու հետագայում էլ ինչպես սկզբնաղբյուրներում, այնպես էլ արաբագիտության էջերում ներկայացվեր որպես «Վաթանի» կուսակցության «զինվորական թև»։

«Հայտագրի» և «Վաթանի» կուսակցության շնորհիվ իր շուրջ որոշ իմաստով «վաթանի»-ազգային միասնական ճակատ ստեղծած, տվյալ պահին որդուց ղեկավարվող «եվրոպական» դահլիճը վերջնականորեն լուծարքի ենթարկելով «իսկապես եգիպտական տարրերից» կառավարություն ստեղծած և երկրում սահմանադրական-խորհրդարանական միապետական կարգ հաստատելով օտարերկրացիների ոտնձգությունները խափանելու միտող խդիվ Իսմայիլը, սակայն, Անգլիայի ու Ֆրանսիայի ճնշմամբ հունիսի 24-ին հարկադրվեց ստորագրել իր հրաժարման գիրը և սուլթանի կողմից գահընկեց հայտարարվելով, երկրից վտարանդվեց։ Խդիվ հռչակվեց Թաուֆիք փաշան, որի առաջին գործն եղավ ցրել Երևելիների ժողովը, մերժել հոր կարգադրությամբ մշակված սահմանադրության նախագիծը, վերահաստատել եվրոպական ֆինանսական վերահսկողության սիստեմը և «Վաթանի» կուսակցության «քաղաքացիական թևի» ղեկավար Շերիֆ փաշայի փոխարեն վարչապետ կարգել ռեակցիոն ֆեոդալ ազնվականության պարագլուխ և անգլիացիների կամակատար Ռիադ փաշային։ Եգիպտոսում հաստատվեց ծայրահեղ հետադիմության բռնատիրական վարչակարգը[6]։

Եթե չմոռանանք, որ եգիպտական ազգային բուրժուազիան որպես դասակարգ դեռ չէր կազմավորվել (է. Ռաթմանի խոսքերով՝ «դեռ խոսք լինել չի կարող դասակարգի վերածված և իր մինչկապիտալիստական շրջապատից ազատագրված բուրժուազիայի մասին»[1]), հետևաբար և չուներ իր միջավայրից ծագած հասարակական-քաղաքական առաջավոր գործիչների մտավորական կազմակերպյալ մի դաս, որ ազգաբնակչության ամենալայն խավերի դժգոհանքին շեշտ և ուղղություն տար, ժողովրդին համախմբող կարգախոս ու գործողության մղող ծրագիր առաջադրեր, ապա հասկանալի կդառնա, թե ինչո՞ւ «վաթանի»-ազգային միասնական ճակատի պարտության պայմաններում վերջինիս բաղադրատարրերի համախմբումն արագորեն քակտվեց։ Եվ ուրիշն զարմանալի չէ, բնավ, որ Թաուֆիքի գահակալությունից հետո, ինչպես և նախկինում, մինչև «Ազգային հայտագրի» շուրջ խայտաբղետ տարրերի միասնականացման փորձը, համաժողովրդական դժգոհանքը եռման ու պոռթկման մի քանի (ու ոչ միշտ հարազատ) շրջանակներ

ու տարբեր ձևեր էր գտնելու, ավելին՝ ծագմամբ հայազգի Ադիբ Իսհակի գլխավորած բեյլիքության արմատական նահդալականների կողմից շուրջ երկու տարի առաջ ասպարեզ նետված «Եգիպտոսը եգիպտացիներին» լոզունգն էլ այդ շրջանակներում տարբեր ընկալումներ ու դրսևորումներ էր ստանալու։ Կարիք չկա առանձնապես ընդգծելու, որ այդ լոզունգն իրականում, գոնե իր հղացողների համար, ուներ համաեղիպտական-ազգային ընդգրկում, քանի որ փաստորեն ուղղված էր ոչ այնքան բանակի առջևյում «չերքեզ-փաշաների» եկվոր մահմեդական դինվորականության գերակայության դեմ, ինչը վերջին հաշվով, թեկուզ և կարևոր, մասնավոր երևույթ էր, որքան՝ երկրի ամբողջ կյանքում այդ զորավարության հետ նաև եկվոր-մահմեդական կալվածատեր ու աստիճանավոր ազնվականության և արևելյան-քրիստոնյա կոմպրադոր առևտրավաշխառուների բացարձակ գերակշռության, հատկապես Եվրոպայի դիվանագետների սանձարձակ ոտնձգությունների և ֆինանսատնտեսական թալանաբար գործամոլների անհակակշիռ տիրապետության դեմ։

Շրջանակներից մեկը, որ հեռանկարում կենտրոնականն էր դառնալու, ցածրաստիճան սպայական այն դասն էր, որի հիմքի վրա առաջացել էր «Վաթանի» կուսակցության «զինվորական թևը»։ Սույն հոդվածում մենք փորձելու ենք ուրվագծել այդ դասի դիմապատկերը, քանի որ խնդրո առարկա «զինվորական թևը» ետթաուֆիքյան ժամանակաշրջանում միառժամանակ հանդես էր գալու որպես առավել կամ նվազ ինքնուրույն «Վաթանի» կուսակցություն, 1879 թ. աշնանը «քաղաքացիական թևի» հետ մի անգամ ևս ժամանակավորապես համաձուլվելուց հետո գլուխ էր բերելու 1881 թ. սեպտեմբերյան հեղաշրջումը, վերջապես նույն տարվա վերջին ու հաջորդի սկզբներին ձևավորվելով որպես «Վաթանի» առավել հանրահայտ կուսակցական կազմակերպությունը, 1882 թ. գլխավորելու էր եգիպտական ժողովրդի հակաբրիտանական զինյալ պայքարը։

Սկզբից ևեթ արձանագրենք, որ հիմնականում եգիպտացի արաբներից կազմված ցածրաստիճան սպաների դասը մինչև 1876—1877 թթ. բացառապես, իսկ այնուհետև առնվազն մինչև 1881 թ. սեպտեմբերյան հեղաշրջումը գլխավորաբար նեղ-արհեստակցական խնդիրներ էր առաջադրել ու հետամտել դրանց լուծման։ Եվ իրոք, սպաները, ինչպես մինչև 1879 թ. ապրիլը, այնպես էլ այնուհետև, ընդգծման արժանի համառությամբ ու հարատևությամբ բանակի շրջանակներում եգիպ-

տական արաբների և եկվոր տարրերի միջև «ազգային իրավահավասարության» սաիդյան քաղաքականությունը կիրառելու պահանջով էին հանդես գալու։

Բանն այն է, որ փոխարքա Մուհամմեդ Սաիդ փաշան (1854—1863) Բարձրագույն Դռնից իրավունք ձեռք բերելով չհարգելու Մուհամմեդ Ալիին 1841 թ. պարտադրված սահմանափակումները և իր զորքի թվաքանակը հասցնելու երեսուն հազարի, նոր եռանդ էր հաղորդել դեռ իր զորահրամանատար եղբոր՝ Իբրահիմ փաշայի կողմից նախաձեռնված սպայության «արաբականացման» գործին։ Այլ խոսքով նա շարունակել էր 1840-ական թթ. փոխարքայի, իսկ այժմ արդեն սուլթանի հավանության պարտադրաբար ենթակա չեղող սպայական ցածր աստիճանները արաբներին շնորհելու քաղաքականությունը, առավել ընդունակ ֆելլահներին առաջ քաշելով ջոկատների, իսկ համապատասխան պատրաստականություն անցածներին՝ գնդերի ու վաշտերի հրամանատարական պատասխանատու պաշտոնների[3]։ Խդիվ Իսմայիլը, ահա, բարդացող իրադրության մեջ նահանջելով իր նախորդի և սկզբնական շրջանում իր իսկ կիրառած պրակտիկայից, սկսել էր, ի վնաս արաբների, առաջ քաշել ալբանական, թուրքական (նաև միջինասիական թյուրքալեզու), չերքեզական և քրդական ծագմամբ զինվորականների, որոնք, ինչպես վկայում էր ֆրանսիացի մի ժամանակագրող, «նույնքան տգետ և ավելի վախկոտ էին, քան զինվորները, որոնց վրա ծանրացնում էին իրենց բռնակալական լուծը»։ Հաստատելով, որ «բանակում օսմանցիներն ու նրանց ստրուկներն են տիրում բոլոր աստիճաններին», ականատես հեղինակն ավելացնում էր, որ սպայակույտի դպրոցի 200 ունկնդիրները «մամլուքներ կամ Պոլսից հատկապես ուղարկված թուրքեր էին, այն դեպքում, երբ միայն «մի քանի արաբներ, հատուկ շնորհի արժանացած» բացառություններ էին այնտեղ ընդունվում։ Ավելին, մինչդեռ ուսումնարան գործուղվող թուրքերն ու մյուսները անմիջապես ստանում էին լեյտենանտի կոչում, արաբներն այդ կոչման կարող էին հավակնել միայն ուսումնառության վերջում, այն էլ՝ ոչ առանց մտավախության, քանի որ դասախոսներին հանձնարարվում էր խոչընդոտել քննական հանձնաժողովի առաջ նրանց հաջողությունը։ «Թուրք սպաներն արագորեն հասնում են բարձր աստիճանի, հաճախ առանց ամենաանհրաժեշտ տարրական գիտելիքներն իսկ ձեռք բերելու»,—արձանագրում էր ժամանակագիրը[9]։

Այս ամենի հետևանքով մեծացել էր լարվածությունն ընդմեջ սպայական երկու դասերի՝ «ֆելլահների» (եգիպտացի արաբների) և «չերքեզների» (այլազգիների), լարվածություն, որը կարևոր դեր էր ունենալու եգիպտական «վաթանի»-ազգային շարժման հետագա զարգացման գործում[10]։ Ասենք, որ մեր կարծիքով դժվար թե տեղաբնիկ սպաների դասն իրր կամովին ու հպարտությամբ ինքզինք «ֆելլահներ» անվանած լինի, ինչպես պնդվում է մեր որոշ արաբագետների կողմից։ Մենք ավելի հավանական ենք համարում, որ այդ դասից «չերքեզ-փաշա» անվանված եկվոր ռազմա-ֆեոդալ ազնվականներն են արար անազնվական կալվածատեր սպաներին տվել իրենց բառապաշարում անկասկածելիորեն արհամարհական երանգ ունեցող «ֆելլահներ» մակդիրը։ Այդ հավանականությունը որոշակիորեն հիմնավորվում է այն իրողությամբ, որ ժամանակակիցներից Կամերոնը օգտագործել է «տեղաբնիկ կամ ֆելլահներ անվանված սպաները» դարձվածքը[11], իսկ Ա. Կոլվինն ավելացրել է. «Եգիպտացի սպաների հպարտությունն ամեն օր խոցվում էր թուրք կամ չերքեզ աստիճանակիցների խրոխտ կեցվածքից և արհամարհալիր վերաբերմունքից»[12]։ Լեյնը, որ XIX դարի երկրորդ քառորդին մի տասնամյակից ավելի ապրել է Եգիպտոսում, գրել է. «Կահիրեի տեղաբնիկ ժողովուրդն ինքզինք սովորաբար կոչում է ալ-մսրիյյին, առլադ Մըսր կամ աել Մըսր, իսկ ավելի հաճախ՝ առլադ ալ-բիլադ, ինչ որ նշանակում է Մըսրի ժողովուրդ, Մըսրի զավակներ, երկրի որդիներ։ Գյուղացիներին սովորաբար կոչում են ալ-ֆելլահին, այն է՝ հողամշակներ։ Թուրքերը հաճախ այդ տերմինով անվանում են Եգիպտոսի բոլոր բնակիչներին, դրա մեջ դնելով նվաստացուցիչ ոգի («կոպիտ, անդաստիարակ մարդիկ», «խեղկատակներ»)։ Նրանք նույնպես օգտագործում են աել ֆարաուն-Փարավոնի ժողովուրդ արհամարհական որակականը, որին եգիպտացիները, եթե համարձակություններից զուրկ չեն, պատասխանում են աել-Նիմրուր—Նեմրութի ժողովուրդ որակականով»[13]։

Համենայն դեպս փաստ է, որ 1876-ին, դեպի Եթովպիա անհաջող գինարշավից հետո, խդիվ Իսմայիլը գնդերի և վաշտերի մահացած հրամանատար սպաներին փոխարինելիս առաջ էր քաշել մի խումբ եգիպտացիների[14], որոնք արդեն այդ ժամանակ որոշակի նկրտումներ ունեին և իրենք իրենց տվել էին «վաթանի» ինքնանվանումը։

Այնքան, որքան արաբերենում «վաթան» բառը շարունակում էր պահպանել «ծննդյան ու բնակության վայր» ավանդական իր իմաս-

տը, ապա, ինչ խոսք, որ «վաթանին» իր ժամանակին ուներ բուն իսկ «տեղաբնիկ եգիպտացի» նշանակությունը, որը, սակայն, հետզհետե ավելի ու ավելի էր թաթախվում ազգային ծագման հասկացողության մեջ, ստանում եթե ոչ մերօրյա «աղգայնական-հայրենասեր» ընկալումը՝ ապա գոնե «հայրենիքի որդի ու տեր» նշանակությունը։ Զմոռանանք, որ հենց 1870-ական թվականներին եգիպտական մտավորականությունը «վաթանի» սահմանման մեջ ներդնում էր նոր տարր՝ հայրենասիրություն, որը հանձնարարում էր ազգային կապը գերադրել կրոնականին և հաշվատքից ոչ պակաս աշխատել նաև ի փառս հայրենի երկրի[15]։

Բոլոր դեպքերում «վաթանի» սպաները համախմբվել էին «Կահիրեի դպրոցում սովորած և բավականին զարգացած»[16] Ալի առ-Ռուբիի շուրջ և 1876-ին ստեղծել ընդհատակյա մի ընկերություն, որը, ըստ էության նպատակադրած լինելով «հայրենիքի փրկությունը», իր անդամների մեծամասնության դասային թե մտավոր, ուրեմն և գաղափարական-աշխարհայացքային անխուսափելի սահմանափակության հետևանքով նեղ-արհեստակցական պահանջների էր պատշաճեցրել «Եգիպտոսը՝ եգիպտացիներին» լոզունգը։

«Վաթանի» սպաների սոցիալական դիմապատկերից առաջ ջանանք ուրվանկարել նրանց քաղաքական ներշնչարանի ցարդ արաբագիտության էջերում անտեսված հիմնակետը։

Սկսենք միանալով Ն. Իվանովի այն հաստատմանը, որ 1876-ին իրենց գաղտնի ընկերության հիմնադրումից հետո «ֆելլահ» սպանների մեծամասնությունը, դիրքորոշվելով հանդերձ ոտնձգություններ և «եվրոպական» դահլիճի քաղաքականության դեմ, ընդհուպ մինչև 1879 թ. հունիսին գահընկեց արվելը «լրիվ լոյալ էր խդիվ Իսմայիլի նկատմամբ»[17]։ Ռ. աս-Սաիդը, թեկուզ և «գյուղացիական հիմք» վերագրելով սպայական կազմակերպության, ըստ երևույթին հենց այդ մեծամասնությունը նկատի ունենալով է, որ խոսել է հունիսի վերջերից կազմակերպության ղեկավարների՝ նոր խդիվ Թաուֆիքին «կաշառելու», այլ խոսքով «վաթանի»-ազգային ուղղության սիրաշահելու անհաջող փորձի մասին[18], փորձ, որը կարող է կատարված լինել Թաուֆիքի հետ ներդաշնակ աֆղանիականների միջոցով և որը չէր կարող չձախողվել այն պատճառով, որ հենց այդ օրերին սեյյիդ Ջեմալ ադ-Դին ալ-Աֆղանին փաստորեն երկպառակել էր «Վաթանի» կուսակցությունը՝ հիմնադրելով իր «Վաթանի անկախ կուսակցությունը»։

«Վաթանի» սպանների շրջանում մինչև 1879 թ. հունիսի 24-ը խեդիվ Իսմայիլի դեմ դիրքորոշված փոքրամասնության մասին խոսակցությունն անհրաժեշտ է բացել փոքր-ինչ հեռվից. սպայական գաղտնի ընկերության փաստական ղեկավար Մահմուդ Սամի ալ-Բարուդիի առեղծվածից։

Սովետական, թե սրբասահմանյան արաբագետներից միայն ու միայն Խ. Կիլբերգն է, որ առ այսօր փորձել է լուծել ալ-Բարուդիի առեղծվածը։ Սակայն նա էլ, զորավար փաշայի դեմքի ու դիմակի ինչ-որ տարբերություն կռահելու գծով ճիշտ ուղու վրա ընկնելով, փաստորեն սխալ պատասխան է առաջադրել, մանավանդ, որ ալ-Բարուդիին հայտարարել է «վաթանի» սպայության «առավել հետևողական սահմանադրականներից մեկը»[19]։

Ալ-Բարուդին «վաթանի», ուրեմն տեղաբնիկ-«ֆելլահ» սպաներին դաշնակցած միակ չերքեզը չէր, անշուշտ։ Նրա նման չերքեզական ծագում ունեին, բացի իր եղբայր Յակուբ Սամիից, նաև Ալի առ-Ռուրին, Համիդ Ամինը և ուրիշներ։ Սակայն նա «վաթանի» ճակատում տվյալ պահին միակ «չերքեզ-փաշան» էր. չերքեզ մամլուք մի բեյի այդ հետնորդը շատ արագ էր առաջ խաղացել ու դարձել զորավար-փաշա[20]։ Ֆրանսիայում և Անգլիայում կատարելագործված զինվորական, արաբերենից բացի նաև օսմաներեն ու պարսկերեն լեզուների և պատմության ու դրականության քաջագիտակ, նա միաժամանակ 1850-ական թթ. վերջերից եգիպտական քերթողության բարձրացող աստղն էր համարվում[21]։ Հեծելազորային դնդի հրամանատար, նա Նուբար փաշայի կառավարության օրոք նշանակվել էր Կահիրեի ոստիկանության պետ, Թաուֆիքի գահակալումից հետո Ռիյադ փաշայի կառավարության կազմում վարելու համար սկզբում վակուֆների, ապա և ռազմական մինիստրի պաշտոնները։

Ալ-Բարուդին ավելի հետաքրքրական է շնորհիվ այն իրողության, որ թող «վաթանի» սպայական միջավայրի առավել «փայլուն խելքի տեր», առավել «խիզախ ու վճռական» դեմքը լինելը, առավել բազմակողմանի պատրաստականությունը, ավելի բարձր ծագումն ու դիրքը, մանավանդ հավակնոտությունը, այն, որ «ինքն իրեն զգում էր կարծես բարձր պաշտոնների համար ստեղծված», առաջին օրից մինչև վերջինը կանգնած լինելով հանդերձ եգիպտական «վաթանի»-աղգային շարժման հենց կենտրոնակետում, պատմագրության կողմից որպես կանոն տեղադրվել է շարժման ետնամասում։ Ամերիկացի գրն-

դապետ Չարլզ Լենգն ընդգծելով, որ նա եգիպտական ժողովրդի հակաբրիտանական ղինյալ «ապստամբության ոգին էր և առաջնորդը», ուրեմն և «շարժումը ղեկավարեց սկզբից մինչև վերջ», ավելացրել է. «Սակայն խարդավանքներին նրա հակումը պատճառ դարձավ այն բանի, որ Սամին զանգվածների պատկերացման մեջ մնաց պատմության ետնամասում»։ Տ. Բարաքաթն իր հերթին շեշտել է. «Միակ մարդը, որ իր ազդեցության ուժով կարող է հավասարվել Օրաբիին, առանց սակայն ժողովրդի աչքում նրա փառքը կիսելու, Մահմուդ Սամի ալ-Բարուդին է»[2]։

Ալ-Բարուդի ճամփով էլ հնարավորություն ունենք պարզելու, որ սպայական-կազմակերպության հակաիսմայիլական փոքրամասնությունն իր ներշնչանքն ստանում էր ուղղակի օսմանյան մայրաքաղաքից։ Սուլթանների նստավայրի դիվանատան եգիպտական հարցին վերաբերող փաստաթղթերն ուսումնասիրած Հասան Աղալին, օրինակ, հաստատելով, որ եգիպտական սպաների գաղտնի կազմակերպության իսկական ղեկավարը ալ-Բարուդին էր, շեշտել է.—1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի մասնակից, նա բազմիցս Պոլիս այցելեց և հիմնականում իր անունից էր, որ իրականացվում էր կապը Աբդ ալ-Հալիմ փաշայի, նաև եգիպտական սպաների դժգոհանքն իր շահերին ծառայեցնել ջանացող Աբդուլ Համիդի նստավայր Յըլդըզի Քյոշկի հետ[73]։ Ի միջի այլոց, հետագային, դատարանի առաջ կանգնած, ալ-Բարուդին խոստովանելու էր (և Օրաբին հաստատելու էր նրա խոստովանությունը), որ հալիմական շարժման գլխավոր ոգեշնչողն ու ղեկավարը ինքն էր եղել։

Աբդ ալ-Հալիմ փաշան Մուհամմեդ Ալիի 95 երեխաներից կրտսերագույն մանչն էր և ուրեմն 1866-ի սուլթանական հրովարտակով (որ թույլատրում էր խախտել եգիպտական գահը տոհմի ավագին հանձնելու կարգը պահելով ընտանիքի ներսում՝ հորից որդուն փոխանցել) կորցրած լինելով գահաժառանգման ամեն մի հույս, հանկարծորեն այն վերագտել էր ներեգիպտական քաղաքական խառնակությունների ոլորաններում։ Կարիք չկա շեշտելու, որ եգիպտական տագնապի խորացման մեջ իրոք էլ չէր կարող իր որոշակի դերը չունենալ ժառանգման նոր, արդեն ավելի քան մի տասնամյակ իշխող տոհմը երկպառակող կարգը, մանավանդ որ Աբդ ալ-Հալիմը, ինչպես նշել է ժամանակակիցներից Տ. Բարաքաթը, «կողմնակիցներ ուներ երևելիների և իշխանների թվում»[24]։ Տարբեր վկայությունների վրա հենվելով Ն. Իվանովը,

իր հերթին, հաստատել էր, որ «Պոլսում ապրող, քրիստոնյաների ան-հաշտ թշնամին համարվող և իրեն գահակալման իրավունքից զրկած Իսմայիլին ատող Արդ ալ-Հալիմ փաշան էր կանգնած սպայական դա-վադրության ակունքների մոտ» և որ «ըմբոստ իշխանը» կանխորոք եգիպտական միջավայրում կարևոր հենարան ստեղծելով հանձին «մա-սոնների (այլ խոսքով ալ-Աֆղանիի հիմնադրած «Ազգային օթյա-կին»,—Ն. Ն.) հարած ու նրանց միջոցով իր հետ կապ պահպանող» սպայական փոքրամասնության, «1879-ին ապահովվեց Բարձրագույն Դռան աջակցությամբ և պայքար շղթայազերծեց իր կորովալիր ազ-դականի դեմ, նրաղելով գրավել Եգիպտոսի գահը»[25]։ Բնականաբար, Արդ ալ-Հալիմը չէր կարող Բարձրագույն Դռան նկատմամբ հանձն չառնել մի պարտամուրհակ. Եգիպտական խդիվությունը շեղել Օս-մանյան կայսրությունից առավելագույն չափով ինքնուրույնացնելու իսմայիլական քաղաքականությունից և, թեկուզ առանց համահարթելու արաբական վիլայեթների շրջանակներում, հնարավորին չափ վերեն-թարկել սուլթանի գերիշխանությանը։

Այս ամենից բխում է մի տարրական եզրակացություն. այն, որ 1879 թ. ապրիլին ստորագրելով «Ազգային հայտագիրն» ու հարելով խդիվ Իսմայիլի շուրջ ստեղծված «վաթանի»—ազգային ճամբարին, որ և նույնն է՝ «Վաթանի» նորաստեղծվող կուսակցությանը, վերջինիս «զինվորական թևը» թեկուզ և փոքրամասնական, այլ զեկավար դիր-քերում կանգնած մեծազգեցիկ բաբուդիականների ճանապարհով փաս-տորեն հետապնդում էր «վաթանի»—ազգային ճակատի առաջադրանք-ներին ու նկրտումներին հակընդդեմ և ըստ էության հակաազգային կուրս, որի զսպանակները գտնվում էին սուլթանի քաղաքական զորա-կենտրոնի ձեռքում։

Մի ամբողջ շարք արաբագետների կարծիքով «զինվորական դա-վադրության իսկական զեկավարը հանդիսացող ալ-Բարուդիի հետ կապեր հաստատելով է, որ 1879 թ. երկրորդ կեսին Օրաբին «իրեն հատուկ էներգիայով օտարերկրացիների դեմ պայքարի մեջ մտավ»[26], այլ խոսքով դարձավ ոչ միայն սպայական կազմակերպության, ուրեմն և «Վաթանի» կուսակցության «զինվորական թևի» պարագլուխը, այլև «վաթանի»—ազգային շարժման առավել պոտենցիալ զեկավարը։ Ալ-Բարուդիի կողմից Օրաբիի առաջ մղման հարցում անկասկած իր դերն ունեցած պետք է լինի այն իրողությունը, որ ի տարբերություն շերքեզ առ-Ռուբիի, նա տեղաբնիկ էր և ուրեմն ավելի հարմար դեմք էր «վա-

թանի» լինել հավակնող շարժումը գլխավորելու։ Եվ սակայն նույնքան անկասկածելի պիտի համարել և այն, որ նա, որպես խդիվական տոհմի փեսա, իր սուլթանասիրության ու հետագիմականության զոհ գնացած Աբբաս Հիլմի I-ի ավագ որդու՝ ալ-Համի փաշայի մեկ հատիկ աղջկա ամուսինը, ալ-Բարուդիի կողմից առաջ էր քաշվել որպես սուլթանական-խալիֆական խարդավանքների թե հալիմական հավակնությունների կենսագործման հարմարագույն գործիք։

Եվ սակայն Օրաբին այստեղ մեզ համար նաև հարմարագույն թեկնածուն է՝ «վաթանի» սպաների, ուրեմն և «Վաթանի» կուսակցության պատկառելի բաղադրատարր «զինվորական թևի» սոցիալական դիմապատկերը պարզելու տեսակետից։

Ահմեդ Օրաբի ալ-Հյուսեյնին ժամանակակցի վկայությամբ իր արտաքինի՝ «բարձր հասակի (մեկ մետր և ութսուն սանտիմետր), դեմքի ներդաշնակ գծերի, հաստ շուրթերի ու թավ հոնքերի» շնորհիվ[27] Մուհամմեդ Սաիդ փաշայի օրոք բանակում արագ առաջ էր ընթացել և քսան տարեկանին փոխ-գնդապետի աստիճանով ու կայմակամ տիտղոսով դարձել էր փոխարքայի համհարզը, սակայն Իսմայիլի օրոք անուշադրության էր մատնվել ու ավելի քան մի տասնամյակ սպասելուց հետո երեսուներկու տարեկանին արժանացել էր գնդապետի աստիճանին ու միրալայի տիտղոսին։ Ի միջի այլոց, եթե մերժելի են բուրժուական հեղինակների՝ Օրաբիին «հավակնոտ ապաշնորհ» և «շատախոս ու տգետ խամաճիկ» ներկայացնելու ջանքերը[28], ապա ոչ միայն Ֆ. Ռոտշտեյնի հետ կարող ենք հաստատել, որ Ահմեդ բեյն իր համազգեստի ներքո իրականում մնում էր «հասարակ ու կիսագրագետ մի ֆելլահ»[29], այլև Ն. Իվանովի հետ կրկնել, որ նա «ռազմական պրակտիկ փորձ ու զինվորական հատուկ կրթություն չուներ»[30]։

Վ. Բ. Լուցկին օրաբիական իբր թե «ֆելլահների շարքից» բարձրացած սպաներին «ազգային դեմոկրատական տարրեր» որակելով ու նրանց զորական «ազնվականական փաշաներին» հակադրելով, փաստորեն ցանկացել է հուշել բանակի ներսում հակամարտության ինչպես ազգային, այնպես էլ սոցիալական ներքնածալք ունենալը, մանավանդ, որ այլուր ոչ միայն շեշտել է՝ «իրականում էլ նա (Օրաբին,—Ն. Ն.) Ստորին Եգիպտոսի Հարիյա-Ռուզնա գյուղից ֆելլահի որդի էր», այլև ականատեսի նման վկայել է, որ ամիսներով ռոճիկ չստացող օրաբիական սպաների «ընտանիքները սովահարվում էին»[31]։

Միրալալ Օրարի բնչի «ֆելլահության» վերաբերյալ պնդումը, որը հանդիպում է ոչ միայն Վ. Լուցկու մոտ[2], հիմնազուրկ է։ Նա, միջակ հողասեփականատեր և բարեկեցիկ գյուղացու, իր գյուղի շեյխ ալ-բայադ նշանակված մարդու, այլ խոսքով օմդայի որդի, հորից Շաբիլյա նահանգում ժառանգած 8 ֆեդդան (շուրջ 2,5 հեկտար) հողը բանակում ծառայելիս իր «խնայողությունների» օգնությամբ և քայքայվող համագյուղացիների հողակտորների հաշվին հասցրել էր 570 ֆեդդանի (240 հեկտար) և փաստորեն վերածվել էր խոշոր կալվածատիրոջ[33]։ Արձանագրենք, որ միջին հաշվով 50 և ավելի ֆեդդան հողասեփականատիրություն ունեցողները Եգիպտոսում մաս էին կազմում կալվածատերերի դասակարգին և հողասեփականատեր եգիպտացիների 1,55 տոկոսը կազմելով՝ տիրում էին մշակելի հողային ֆոնդի 43,8 տոկոսին[34]։ Խ. Կիլբերգն իրավամբ է Օրաբիի սոցիալական դեմքը բնութագրել որպես «շահագործող տնտեսատեր գյուղացու՝ կուլակի, որ ոգորել է աստիճանաբար դառնալ ու դարձել էլ է կալվածատեր»[35]։

Օբարիի տիպի «ֆելլահներ» էին նաև ընդհատակյա կազմակերպության անդամակցած ոչ եգիպտացի արաբ մյուս «սովահարյալ» սպաները, որոնք ըստ Վ. Զեռնովսկայայի, «իրենց նյութական դրությամբ կարող էին լրիվ առնչվել ազգաբնակչության ապահովված խավին»[36], ըստ Գ. Ներսեսովի սոցիալական տեսակետից համարյա գլխովին «կապված էին գյուղական մանր-կալվածատիրական վերնախավի հետ»[37] և որոնց մասին Ա. Գոլդոբին իրավամբ գրել է. «Նրանք դուրս էին եկել նոր կալվածատերերի, հարուստ գյուղացիների շարքերից»[38]։

Այստեղ մատնանշենք ուշադրության արժանի մի պարագա. XIX դարի վերջին քառորդի սկզբներին Եգիպտոսում նորածնվող բուրժուազիան սոսկ պայմանականորեն կարող է «եգիպտական» համարվել։ Այլանդակ իրողություն էր այն, որ երկրի քաղաքաբնակ ազգաբնակչության կազմում կապիտալիստական հարաբերությունների կրողները համարյա գլխովին օտարերկրացիներ էին, իսկ նրանց միախառնված եգիպտացի, արաբ կամ եգիպտականացած եկվոր-մահմեդական տարրերը մատների վրա էին հաշվվում։ Իրոք էլ այսպես ասած եգիպտական «բուրժուազիան» ներմուծումն ու արտածումը, բանկային գործը, շինարարությունը, առևտուրն ու ճղճիմ արդյունաբերությունն իրենց ձեռքերում ամփոփած արևմտաեվրոպացիներն ու ոչ-եգիպտական (հա-

բավային և արևելյան միջերկրականյան) ծագմամբ «եգիպտականացած» կոմպրադորներն էին կազմում։

Կապիտալիստական հարաբերությունների բուն իսկ եգիպտական կրողների՝ «կիսաբուրժուա», պարզապես գյուղացիության շահագործման ֆեոդալական և կիսաֆեոդալական դեռ գերակշիռ եղանակներին կապիտալիստական եղանակներ խառնող հողատերերի շարքում օտարերկրացիների համեմատությամբ բացարձակ թվաշատը խդիվական տոհմի ներկայացուցիչները, մեծամասնությամբ եկվոր-մահմեդական խոշոր ֆեոդալները և արաբական ծագմամբ մեծ ու միջակ հողասեփականատերերն էին։ Հենց վերջիններս էլ, աճելով քայքայվող հայրենակից ֆելլահների հողակտորների հաշվին, գյուղացիության հարկադրական, ավելի հաճախ կուրբաջ-մտրակի համոզիչ ուժով ապահովվող աշխատանքի հարցում աշակերտելով տեղական խոշոր ֆեոդալ ազնվականներին, շահագործման կապիտալիստական եղանակների հարցում էլ աշակերտում էին օտարերկրացի կալվածատերերին։ Նրանք, այդ թվում և առաջին հերթին իրենց հրամանատարման հանձնված համազգեստավոր ֆելլահների տաբապարհակ քրտինքը հարստացման իրենց եռանդին ծառայեցնող «ֆելլահ» սպաները, լուցկու «ազգային դեմոկրատական տարրեր» բնութագրի հետ կարող էին առնչվել միայն այնքան, որքան հանում գոյապահպանման ու պարարտացման-ամրապնդման իրենց պայքարում պիտի բախվեին իրենց հզոր մրցակիցների երկու գնդերի՝ ինչպես տեղացի «ակամա բուրժուա» ֆեոդալ կալվածատերերի, այնպես էլ հատկապես «հարկադրաբար կիսաֆեոդալ» օտարերկրացի խոշոր կալվածատերերի հետ։

«Ֆելլահ» սպաները «ազգային դեմոկրատական տարրեր» բնութագրի, այլ խոսքով «բուրժուական» մթնոլորտի հետ կարող էին առնչվել նաև խոշոր քաղաքների շրջանակներում։ Այնտեղ, եվրոպական տերությունների գաղութարարական նկրտումների և եվրոպական առևտրական մոնոպոլիստական գերհզոր ընկերությունների ճնշման պայմաններում գործող եգիպտական խոշոր առևտրականությունն իր հոգևարքը դեռ դարասկզբից մի կերպ շարունակում էր ոչ միայն տնտեսական, այլև ներքաղաքական թե արտաքին-քաղաքական ընդհանուր առմամբ անբարենպաստ պայմաններում։ Այդ պայմանների, նաև իր ֆինանսատնտեսական գործելակերպի միջնադարականության ու պետական հովանավորման փշրանքների իսկ անգոյության հետևանքով անխուսափելիորեն անկման դատապարտված

այդ առևտրականության, ինչպես և արհեստավորության համար հոգեվարքը շարունակելու գլխավոր միջոց էր դարձել «ձևականորեն զինվորական կորպուսների մեջ ներգրավվելը», բնականաբար այդ «հովանավորության» ի վաճառահատուցումն,—ինչպես դիտել է տվել Ֆ. Ացամբան,—վճարելով խոշոր գումարներ[39]։ Եթե դա այդպես էր նախկինում, ապա դա առավել ևս այդպես էր XIX դարի երրորդ քառորդի վերջերին, երբ ռազմական դասից դուրս մնացած առևտրաարհեստավորական երևելիներն արդեն ոչ թե ընդհանրապես կորպուսների, ուրեմն և նրանց «չերքեզ-փաշա» հրամանատարների, այլ ինչ-ինչ ճանապարհներով այդ դասի կազմում տեղ գտած «ֆելլահ» սպաների հովանավորությանն ու պաշտպանությանն էին ապավինում և ուրեմն դարձել էին ուղղակիորեն նրանց «հարկատուները»։ Բնութագրական է, որ «ֆելլահ» սպաները, բացի հնչուն փողից, նաև «վաթանի»—ազգային կապիտալի, ունևոր «հայրենասերներին» օտարների ճնշումից ու ոտնձգություններից պաշտպանողի պատմուճանին էին հետամտում, ժամանակակիցներից Բարաքաթի վկայությամբ իրենց վահանը ամպհովանի դարձնելով բուրժուական ամենատարբական նորմերն ու կապիտալիստական հարաբերությունների ամենասրբազան կանոնները կոպտորեն ոտնակոխող եգիպտացի առևտրականների համար[40]։

Ավելացնենք, որ «ֆելլահ» սպաների համար հատկապես փոխ-գնդապետությունից վերև ձգտելը նախ և առաջ նյութական շատ կարևոր իմաստ ուներ։ Բանն այն է, որ եթե բինբաշին (հազարապետը) ամսական ստանում էր 30 հազար, իսկ կայմակամը (փոխ-գնդապետը) 36 հազար ղուրուշ, ապա միրալայի (գնդապետի) ռոճիկը միանգամից ցատկ էր կատարում 100 հազար, իսկ միրլիվայինը (բրիգադային գեներալինը) 150 հազար ղուրուշի պատկառելի գումարի[41]։ Ինչ վերաբերում է Օրաբիի նման արդեն իսկ միրալայական հարյուր հազարին հասածներին, ապա նրանց համար հետագա առաջխաղացքը ոչ միայն աշխատավարձի հիսուն տոկոսով լրացուցիչ հավելման հարց էր, այլև ու մանավանդ տիտղոսի խնդիր, քանի որ միրլիվայությունն ինքնաբերաբար ենթադրում էր նաև փաշայություն։ «Մեծամասնությամբ գավառացիներ,—հաստատել է Վ. Զեռնովսկայան,—նրանք ռազմական ծառայությունը դիտում էին որպես մի այլ՝ ավելի բարձր սոցիալական կատեգորիայի անցման հնարավոր տարբերակ»[42]։

Ոչ միայն 30—36 հազար ղուրուշից 100—150 հազարի, այլև ու մանավանդ բեյությունից հետո փաշայության, հարստություն-կալվա-

ծատիրությունից հետո ազնվականության և «չերքեզ-փաշաների» ազնվականական առանձնաշնորհներին ձգտող եգիպտացի արաբ սպայական դասը, ահա, իր «ֆելլահության» վերաբերյալ հակառակորդների ակնարկներով թե սեփական հավաստիացումներով և իր համար անկասկածելիորեն նեղ-դասային բովանդակություն ունեցող «Եգիպտոսը եգիպտացիներին» լոզունգի «ազգային» կախարդիչ ներգործությամբ, որոշ, արհեստակցական իր պայքարում բոլոր դեպքերում խիստ անհրաժեշտ ժողովրդականություն էր ձեռք բերել զինվորների շրջանում։ Չէ՞ որ շարքային զինվորականությունն իր հիմնական զանգվածով իսկական ֆելլահական միջավայրից էր հավաքագրված, հետևաբար ոչ թե նեղ դասային-արհեստակցական, այլև՝ սոցիալ-տնտեսական և որպես «ազգային» գիտակցվող հիմնավոր դժգոհանք ուներ, հետևաբար «Եգիպտոսը եգիպտացիներին» լոզունգին տալիս էր ժողովրդական-դեմոկրատական իղձերի խտացման բովանդակություն։ «Բանակը հիմնականում բաղկացած էր եգիպտացիներից, որոնք դժբախտ հարկատուներ էին, եղբայրներն ու զավակներն էին,—հաստատել է Կոլվինը, ավելացնելով,—բոլոր աստիճաններում բանակի համակրանքը անպայման հայրենակիցների կողմում էր»[43]։

Կոլվինի վերջին խոսքերի հետ կապված, թե ընդհանրապես, առաջնտյնորեն անհրաժեշտ է ընդգծել մի շատ կարևոր հանգամանք։ Ֆելլահների համար բանակում ծառայության կանչվելը համազոր էր ցկյանս տաժանակրության դատապարտվելուն։ Արաբական, թե օտար անխտիր բոլոր սկզբնաղբյուրներից (Աբդ առ-Ռահման ալ-Ջաբարթի, Բազիլի, Պուժուլա, Լեյն են) վավերագրվող ճշմարտություն է դա, ինչպես և այն, որ ֆելլահ շարքայինների զանգվածի համար սպայական դասը մտրակի առօրեականության խորհրդանիշն էր։ Այս պայմաններում ավելի քան հասկանալի է, թե «վաթանի»—ազգային կապիտալի հետամտող և միայն ու միայն այդ պատճառով մտրակից որոշապես ձեռնպահ մնացող Օրաբիի և ընկերների համար ինչքա՞ն անհրաժեշտ էին նաև «ազգային» երկնառաք լոզունգի շեփորահարումն ու մասսայականացումը՝ «չերքեզ-փաշաների» դեմ պայքարում սոցիալական վստահելի հենարանով ապահովվելու տեսակետից։

Այդ այդպես լինելով հանդերձ, արաբ սպայական դասի սոցիալական, թե տնտեսական նկրտումները, բախվելով «չերքեզ-փաշաների» դիմադրությանը, կարող էին առ առավելն զորանոցային խռովության կերպարանք ստանալ։ 1879 թ. ապրիլին, ահա, «Ազգային հայտագրի»

շուրջ գոյացած Համբարին ու «Վաթանի» կուսակցությանը հարելը սպայական նկրտումներին ապահովում էր ոչ միայն ազգայնության ամպհովանին, այլև խդիվ Իսմայիլի շուրջ համախմբված ֆեոդալ ազնվականության, այլ խոսքով նորածնվող կազմակերպության «քաղաքացիական թևի» հզոր աջակցությունը։

Սպայության շրջանում «Եգիպտոսը եգիպտացիներին» լոզունգի որդեգրումը, սակայն, կապված էր ակնբախ մի պարադոքսի հետ։ Այդ դասի «հակաթուրքությունը» (եկվոր թուրքախոս տարրերի՝ բուն օսմանցի թուրքերի հետ նաև օսմանականացած չերքեզների, ալբանացիների, քրդերի ու մյուսների նկատմամբ թշնամանքը) չէր խանգարում համողմունքային թե շահախնդիր օսմանականության աշխուժությանը, սուլթանականության նկատմամբ առնվազն ցուցադրական հավատարմությանը այն մարդկանց շրջանում, ովքեր մաս չէին կազմում սուլթանապաշտ փոքրամասնության։ Բանը միայն սուլթան-խալիֆի հանդեպ բարնպաշտ մահմեդականությունից թելադրվող խոնարհությունը չէր, ոչ էլ՝ տեղական «թուրքերին» ամրապինդ և եկվոր գյավուր-ֆրանքների ամրապնդվող գերակայության դեմ ընդդիմադրական նկրտումների հաջողության համար Պոլսից ակնկալվող թևարկության կենսականությունը։ Կար և ավելի անմիջական-առօրեական մի հանգամանք, որը նեղ դասային-արհեստակցական շահերին էր զոհվում. անազնվական բեյական սպայությունից միրլիվա-փաշայության կամ ազնվական սպայության կարելի էր անցնել միայն ու միայն սուլթանի սանկցիայով[44]։

Հենց այստեղ էլ բացահայտվում է պարադոքսի՝ մյուս, առավել ուշագրավ երեսը։ Սպայական դասի համար «Եգիպտոսը եգիպտացիներին» լոզունգն ուղղված լինելով տեղական «թուրքության» ազնվական-սպայության հարցում մենաշնորհի դեմ, այն իր սուր ծայրով չէր կարող փաստորեն ուղղված չլինել նաև այդ մենաշնորհը սրբագործող-կիրառող սուլթանության դեմ։ Օսմանականության ոչ թե սոսկ հավատարիմ, այլ ուղղակի սուլթանապաշտ տարրերի համար «Եգիպտոսը եգիպտացիներին» լոզունգի ընդգրկումների լայնացումը և միտումների խորացումը, հակաքրիստոնեական տրամադրություններից բխող այլ գաղութարարական ոտնձգությունների փաստից օբյեկտիվորեն սնվող հակաեվրոպական տրամադրությունների սուբյեկտիվորեն հրահրումը, որ անկասկած կհեշտանար «Վաթանի» կուսակցության շրջանակներում, կնպաստեր լոզունգի հակասուլթանական երանգի տարրալուծմանն ու

մեղմացմանը և ընդհակառակը Բարձրագույն Դռան աջակցության ապավինելու տրամադրությունների շեշտավորմանը։ Այդ ազդակն անպայման պիտի ի մտի ունենալ՝ սպայական դասի բարուդիական հատվածի որպես «զինվորական թև» «Վաթանի» կուսակցության հարելուն, առնվազն ցածրաստիճան սպաների մեծամասնության «վաթանի»—ազգային ճամբարին հարելը չխոչընդոտելուն դրդապատճառները որոնել փորձելիս։

Վերջ ի վերջո, նաև, 1879 թ. գարնանը համախմբվող «վաթանի»—ազգային ճամբարը ավելի շուտ Անգլիայի և Ֆրանսիայի ոտնձգությունների դեմ էր ծառանում և սուլթանը դրանից կարող էր լոկ բարին ակնկալել, առնվազն հրճվել իր եգիպտական, վասալի և եվրոպական իր բարեկամների սրվող վեճում իր համար հնռանկարում հաշտարար միջնորդի, ինչ-որ դեր կանխատեսելով։

Այդպիսի ենթադրություն անելու համար մեզ որոշակի հիմք են տալիս 1879 թ. աշնանը «Վաթանի» կուսակցության «քաղաքացիական» և «զինվորական» թևերի վերամիավորման հանգամանքները։

Եմթաուֆիքյան ժամանակաշրջանում Երևելիների ժողովի ցրումից հետո «Ազգային հայտագիրն» ստորագրած ֆեոդալ ազնվականները իրավիճակը քննարկելու համար հաճախ էին գաղտնի հավաքներ գումարում Իսմայիլ Ռազիբի Կահիրեի, կամ էլ Ալի ալ-Բաքրիի Հելուանի արվարձանային ապարանքում, նույնիսկ շարունակում էին իրենց համախումբն անվանել «Վաթանի» կուսակցություն։ Այդ հավաքներում է, որ որոշվեց «ազգային կառավարությանն» ի խնդիր, այլ խոսքով Ռիադի դահլիճի դեմ պայքարում ավելի հիմնավորապես օգտագործել «ֆելլահ» սպայությունը։ Մի կողմից Մուհամմեդ Սուլթան, Սուլեյման Արազա և Մահմուդ Ֆահմի ազնվական զորավար-փաշաների ու մյուս կողմից Ահմեդ Օրաբի, Աբդ ալ-Ալ ալ-Հիլմի (կամ Հաշիշի) և Ալի Ֆահմի «ֆելլահ»—կալվածատեր գնդապետ բեյերի միջև աշնանը Հելուանում կայացած հանդիպումներից էլ ծնվեց «Հելուանի ընկերությունը», որը հաճախ ընկալվում է որպես ոչ թե նվաղելու վրա եղող «Վաթանի» սկզբնական կուսակցության կյանքում մի նոր փուլ ու նոր որակ, այլ առաջինին փոխարինելու եկած էապես նոր մի կուսակցություն։ Մեր կարծիքով այդ տեսակետի կողմնակիցները, այդ թվում նախ և առաջ Գ. Ներսեսովը, իրադարձությունների սոսկ տեսանելի մակերեսից են ելնում և ըստ էության շրջանցում են խորքը, երբ պնդում են, որ Հելուանի «ընկերությունը դարձավ ազգային շարժման քաղաքացիական

(այն է՝ չափավոր) և զինվորական (վաթանիական) թևերի ժամանակավոր միավորման քաղաքական ձևը»[45]։ Այդ տեսակետի առավել ծայրահեղ կողմնակից Լ. Ռաթմանն անկասկած առավել ակնհայտ թյուրիմացության մեջ է, երբ փաստորեն 1879 թ. ամռան ամիսներին է տեղադրում Հելուանում և իրբ «ազգային շարժմանը ընդհանուր հիմք ու ղեկավարություն տալու» ձգտող սպաների նախաձեռնությամբ ապրիլի 2-ի «Ազգային հայտագրի» հիմքի վրա «Վաթանի» կուսակցության ստեղծումը։ Ավելին, Ռաթմանը «Հելուանի ընկերության» շրջանակներում «մնծամասնություն» է դուրս բերել «բուրժուա-արմատական և հասարակության մեջ իրենց տեղն ապահովել կտրուկ պահանջող տարրերին», երկրորդ տեղը տալով սպայությանը, տարակրոն հոգևորականությանը և հողատեր ազնվականությանը, ըստ որում վերջիններս «մի քանի ամիս անց միայն», նոյեմբերի 4-ի նախօրյակին, «կուսակցության ղեկավար պաշտոններում մթագնվել են սպաների կողմից»[46]։ Իրականությունն այն է, որ «Հելուանի ընկերությունը» դարձնելը «ալ-Լահհայի» շուրջ համախմբված և Թաուֆիքի գահակալությունից հետո ժամանակավորապես տարանջատված երկու խմբավորումների (և այս անգամ էլ ոչ-տևական) վերախմբավորումն էր նշանավորում պարզապես։ Այս պայմաններում «վաթանի»—ազգային շարժման երկու ազդեցիկ բևեռների՝ ֆեոդալ ազնվականության և կալվածատեր սպայության ինչպես գաղնանային խմբավորման, այնպես էլ աշնանային վերախմբավորման ծրագրային հիմքերի համեմատումը մեկն կարող է օգնել օբյեկտիվորեն բացատրելու իրադարձությունների խորքգաղտնարանը, թույլ տալով նախ և առաջ բացահայտել ամառային տարանջատման հիմքը։

Այդպիսի համեմատություն կատարելու գործում մեզ կարող է օժանդակել այն իրողությունը, որ «Հելուանի ընկերությունն» ստեղծեց մի կոմիտե, որը և նույն 1879 թ. նոյեմբերի 4-ին հրապարակեց մի նոր «ալ-Լահհա ալ-վաթանիյյա»՝ պատմագրությանը որպես «Վաթանի (Ազգային) կուսակցության մանիֆեստը» անվամբ ծանոթ փաստաթուղթը[47]։ Նոր «ալ-Լահհայի» մշակման գործում հիմնական ավանդը Օբաբիի կողմից երկրորդ պլան մղված, այլ սպայական կազմակերպության՝ տեսաբանը մնացող Ալի առ-Ռուբիի հետ պատկանում էր ալ-Բարուդիին[48]։ Յոթնամյա հեռավորությունից, ահա, երկրորդ «ալ-Լահհան» փաստորեն, ճիշտ է՝ ավելի ընդհանրորեն և սակայն շեշտադրմամբ, կրկնում էր առաջին «ալ-Լահհայի» հիմնական բոլոր

դրույթները. իսլամին ու շարիաթին հավատարմություն, երկրի ներքին գործերին օտարերկրյա միջամտությունների և ֆինանսական ստրկացման փորձերի դատապարտում, դեմոկրատական սահմանադրության ընդունման և «նեղոսի ազգի» իրավունքների պաշտպանության համար պայքարելու վճռականություն, Եգիպտոսի վարչակառավարումը եգիպտացիների ձեռին տեսնելու և ուրեմն բոլոր օտարերկրացիներին պետական ապարատից հեռացնելու, վարչակառավարման և կրթական սիստեմների ռեֆորմ անցկացնելու, նաև բանակի հզորացման պահանջը։ «Մանիֆեստը» վերջնագրային ձևով դնում էր «ազգային կառավարության» կազմավորման հարցը, ընդգծելով. «Այս կուսակցությունը չի կարող օտար ազդեցությամբ ստեղծված կառավարությունը դիտել որպես երկրի ցանկություններին ու կարիքներին համապատասխանող»[49]։

Եթե զանց առնենք ըստ էության կարևոր այն հանգամանքը, որ նոյեմբերի 4-ի «ալ-Լահիայում» առաջին պլան էր մղված օտարերկրյա ոտնձգություններից երկրի զերծման պահանջը, ապա երկու ծրագրերի միջև կհաստատենք երևութապես անկարևոր թվացող մեկ ու միակ տարբերությունը. նոյեմբերյանը, զանց առնելով ապրիլյանի լոյալության հավաստիքը օսմանականության-սուլթանականության նկատմամբ, շեշտը այս անգամ ևս դնում էր Իսմայիլի հանդեպ հավատարմության վրա, ըստ որում՝ ոչ թե ապրիլյան կառավարող խդիվ Իսմայիլի, այլ արդեն՝ գահընկեց ու վտարանդի Իսմայիլ փաշայի հանդեպ։ Նշանակում է, որ «Վաթանի» կուսակցության «քաղաքացիական» և «զինվորական» թևերի ամառային խզման, ուրեմն և աշնանային վերամիավորման ակունքները նախ և առաջ պիտի որոնել օսմանականության-սուլթանականության հարցում կողմերից մեկի տրամադրությունների բարեշրջման շրջանակներում, ըստ որում Իսմայիլի, որպես օսմանյան-սուլթանական կառավարությունից թեկուզ և հարգալիր, այլ Բարձրագույն Դռան համար տհաճ լինելու աստիճան որոշակի հեռավորություն պահպանելու միտող և հենց Ցելդզի Քյոշկից էլ հարված ստացած պետական գործչի հանգամանքն անչափ օգնում է պարզեցնելու այդ շրջանակները։

Ի դեպ, Ն. Իվանովը պնդել է, որ «Վաթանի» կուսակցության «քաղաքացիական թևի» պարագլուխ ֆեոդալ ազնվականությունը մինչև Իսմայիլի գահընկեցությունը «քաղաքական-կազմակերպական որևէ կապ չուներ Արդ ալ-Հալիմ փաշայի կողմնակիցների՝ ընդդիմադրորեն տրամադրված սպաների հետ»[50]։ Եթե վերջիններիս նույնացնենք առ-

Ռուրիի դաղտնի ընկերության ներսում թվաքանակով փոքրամասնական, այլ ներգործությամբ գերակշիռ հակաիսմայիլական-սուլթանապաշտ բարուդիականների հետ, ապա հեղինակին իրավացի չհամարել չենք կարող։ Ավելացնենք, որ Ն. Իվանովն ալ-Բարուդիին ներկայացրել է որպես փաստական ղեկավարը նաև «Հելուանի ընկերության»[1], որի շրջանակներում, սակայն, հարկադրվելով օսմանականության-սուլթանականության հարցում տակտիկական դիջումների գնալ, չերքեզ ղորավար-փաշան նախընտրել է վարագույրի հետևում մնալ և առաջարեմ մղել Օրաբիին։

«Վաթանի» աշնանային վերահամախմբման կապակցությամբ անհրաժեշտ է, վերջապես, ասել նաև հետևյալը. եթե անմիջականորեն Ռիազի դահլիճի դեմ ու հանուն «ազգային կառավարության» (իսկ հեռանկարում Թաուֆիքի խդիվության դեմ ու հանուն Իսմայիլի վերականգնման) իր պայքարում «քաղաքացիական թևը» սպայական խմբավորման աջակցության կարիքն ուներ ու դրանից դրդված էլ վերստին միախառնվում էր «զինվորական թևին», ապա ալ-Բարուդին և նրա արբանյակները, այդ թվում Օրաբին, օսմանական-սուլթանական իրենց հրապուրանքից և հակաիսմայիլական-հալիմասիրական իրենց նոանդից հրաժարված էին ձևանում հավանաբար ոչ առանց Պոլսի թելագրանքի կամ առնվազն համամտության, պարզապես «վաթանի» ֆեոդալ ազնվականությունը սիրաշահելու և «Վաթանի» կուսակցության, որ և նույնն է՝ «վաթանի»-ազգային շարժման ղեկակետում կանգնելու համար։

Е. О. НАДЖАРЯН

«ВОЕННОЕ КРЫЛО» ЕГИПЕТСКОЙ ПАРТИИ «ВАТАНИ»

Партия «Ватани», являющаяся первой крупной национальной общественно-политической организацией Египта и вообще Арабского Востока, появилась на египетской политической арене в апреле 1879 г., как объединенный фронт разнородных «националистических» («ватанистских») элементов.

Значительную часть подписавших «Национальную программу» фронта деятелей составляли коренные египтяне-младшие офицеры, которые и сформировали «военное крыло» партии.

В статье особое внимание автор обращает на вопросы социальной принадлежности и политической ориентации «военного крыла». Подчеркнуто то обстоятельство, что руководящее ядро младших офицеров принадлежало классу новых землевладельцев. Большое воздействие на нее оказывали военные деятели, связанные убеждениями и интересами с султанской столицей.

1 Wilson C. R., Chapters from My Official Life, London, 1916, p. 186.

2 В. В. Черновская, Офицерский корпус Египта как социальная группа (1850—1952 гг.).—«Народы Азии и Африки», 1975, № 3, с. 69.
1850—1952 гг.). —«Народы Азии и Африки», 1975, № 3. с. 69.

3 F. J. Cox, Arabi and Stone.—„Cahiers d'histoire egyptienne", 1956, № 8, p. 163.

4 История национально-освободительной борьбы народов Африки в новое время. М., 1976, с. 197.

5 عبدالرحمن الرافعي، مصر اسماعيل، ج ٢، القاهرة، ١٩٣٧، ص ٢١٨ J. M., Landau, Parliaments and Parties in Modern Egypt, N. Y., 1954, p. 89.

6 В. Б. Луцкий, Новая история арабских стран, М., 1965, с. 182.

7 Лотар Ратман, Проблемы восстания Ораби 1879—1882 гг. в Египте—«История и экономика стран Арабского Востока», М., 1973, с. 252.

8 Colvin Aucland, The Making of Modern Egypt, London, 1906, p. 7-9.

9 L'Univers ou Histoire et Description de tous les peuples, de leurs religions, moeurs, coutumes, etc., Paris, 1848, p. III: Egypte Moderne, par P. et H. p. 31, 132, p. 137.

10 В. Б. Луцкий, *նշված աշխ., էջ 144։*

11 D. A. Cameron, Egypt in the Nineteenth Century or Mehmet Ali and His Successors until the British Occupation in 1882, London, 1898, p. 264.

12 Colvin Aucland, *նշված աշխ., էջ 9։*

13 Э. У. Лейн, Нравы и обычаи египтян в первой половине XIX в., М., 1982, с. 71—72.

14 Colvin Aucland. Նշված աշխ., էջ 9։
15 З. И. Лекин, Развитие основных течений общественно-политической мысли в Сирии и Египте (Новое время), М., 1972, с. 177. Տե՛ս նաև A. Hourani, Arabic Thought in the Liberal Age (1798—1935), London, 1962, p. 19.
16 Х. И. Кильберг, Восстание Араби-паши в Египте (Антибританское национально-освободительное движение в Египте в 1979—1882 гг.), М.—Л., 1937, с. 123.
17 История национально-освободительной борьбы..., с. 196.
18 رفعة العبد، الاسس الاجتماعية للثورة العربية، القاهرة، ١٩٦٧، ص ١٧٢
19 Х. И. Кильберг, Նշված աշխ., էջ 33։
20 Colvin Aucland, Նշված աշխ., էջ 11։
21 Аль-Фахури Хаина, История арабской литературы, т. 2, М., 1961, с. 335.
22 Х. И. Кильберг, Նշված աշխ., էջ 109։
23 Adali Hasan, Documents Pertaining to the Egyptian Question in the Yildiz-collection of the Başbakanlik Arsivi, Istanbul,—„Political and Social Change in Modern Egypt", London, 1933, p. 59.
24 Х. И. Кильберг, Նշված աշխ., էջ 113։
25 История национально-освободительной борьбы..., с. 196.
26 Նույն տեղում, էջ 201։
27 Х. И. Кильберг, Նշված աշխ., էջ 123։
28 История национально-освободительной борьбы..., с. 201.
29 Ф. Ротштейн, Захват и закабаление Египта, М.—Л., 1925, с. 89.
30 История национально-освободительной борьбы..., с. 201.
31 В. Б. Луцкий, Նշված աշխ., էջ 175—176։
32 Տե՛ս օրինակ. А. А. Губер, Г. Ф. Ким, А. Н. Хейфец, Новая история стран Азии и Африки, М., 1975, с. 325.
33 Х. И. Кильберг, Նշված աշխ., էջ 34։
34 Л. А. Фридман, Развитие капитализма в Египте. М., 1965, с. 34.
35 Х. И. Кильберг, Նշված աշխ., էջ 3[illegible]։
36 В. В. Черновская, Նշված աշխ., էջ 69։
37 Г. А. Нерсесов, Дипломатическая история египетского кризиса 1881—1882 гг. (в свете русских архивных материалов), М., 1979, с. 33.
38 Новая история стран зарубежной Азии и Африки. Л., 1971, с. 473.
39 Ацамба. Социально-экономические позиции крупного купечества в Египте в XVIII—нач. XIX вв., «IV всесоюзная конференция арабистов. Тезисы докладов и научных сообщений», Ереван. 1985, с. 75—77.
40 Х. И. Кильберг, Նշված աշխ., էջ 116—117։
41 L'Univers ou Histoire et Description..., p. 135.
42 В. В. Черновская, Նշված աշխ., էջ 69։
43 Colvin Aucland, The Making of Modern Egypt, p. 9.
44 Նույն տեղում, էջ 17։ Նաև՝ Henry Dodwell, The Founder of Modern Egypt. A Study of Muhammed Ali Pasha of Cairo, Cambridge, 1931, p. 129.

45 Г. А. Нерсесов, Նշված աշխ., էջ 33։

46 Лотар Ратман, Նշված աշխ., էջ 256։

47 A. Abdel-Malek, Idéologie et renaissance nationale. L'Egypte Moderne, Paris, 1969. p. 428—435.

48 Лотар Ратман, Նշված աշխ., էջ 271, ծան. 62։

49 A. Abdel-Malek, Նշված աշխ., էջ 429։

50 История национально-освободительной борьбы.... с. 197.

51 Նույն տեղում, էջ 201։